ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք
Վարդենիս, Հ.Անդեասյան փողոց 4
☏ 026922031,098288063
☏ էլ.փոստ՝ vardenismer@mail.ru

«05» ապրիլի 2023թ.

«ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ-Ի ՀՎՀՀ (01256867)
ՏՆՕՐԵՆ՝ Սամվել Սարգսյան
Հասցե՝ Ք. Երևան, Բաբաջանյան 19շ. 23բն.

Էլ. փոստ՝ sargsyan-samvel@mail.ru
Հեռ: +37455013328

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ Ս.Սարգսյան,

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի և «ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ-ի միջև 18.11.2022թ. կնքված N ՀՀԳՄՎՀ-ԳՀԾՁԲ-22/49-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը, ոչ ուշ քան 2022թ. դեկտեմբերի 9-ը, Վարդենիսի համայնքապետարան պետք է ներկայացներ.

- ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի 12 բնակավայրերում խմելու ջրի ջրագծերի ներքին և/կամ արտաքին ցանցերի կառուցման կամ վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը:
- Վարդենիս համայնքի 5 բնակավայրերում խորքային հորերի կառուցման կամ վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը:
- ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի ապաստարանի կառուցման, Կութ, Ազատ, Նորաբակ բնակավայրերում

թաքստոցների կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը:

- ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Կութ, Ազատ, Ջաղացաձոր, Շատջրեք, Ծովակ և Վարդենիս բնակավայրերի գերեզմանոցների ցանկապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթեր:
- ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի այգու կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթեր:

05.04.2023թ. դրությամբ «ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ոչ մի նախագիծ չի ներկայացվել:

Վարդենիսի համայնքապետարանը Գնումների բաժնի պաշտոնական էլ.փոստի հասցեից 28.03.2023թ. և 30.03.2023թ. գրավոր ծանուցել է "ԱՍ-Նախագիծ" ՍՊԸ-ի կողմից տրամադրված էլ.փոստի հասցեին / sargsyan-samvel@mail.ru / ՝ պայմանագրով սահմանված ժամկետներում պարտավորությունները չկատարելու վերաբերյալ: Սակայն 05.04.2023 թվականի դրությամբ արձագանք չի եղել "ԱՍ-Նախագիծ" ՍՊԸ-ի կողմից:

Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը (խախտվել է ծառայության մատուցման ժամկետը)՝ Վարդենիսի համայնքապետարանը 2023թ. ապրիլի 5-ին միակողմանի լուծում է պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «ԱՍ-Նախագիծ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900145001484 հաշվեհամարին փոխանցել 1 170 000 (մեկ միլիոն հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագիր 5.3 կետի համաձայն), տույժը հաշվարկված է մինչև 05.04.2023թ.: Ինչպես նաև «ԱՍ-Նախագիծ» ՍՊ ընկերությունը պետք է ետ վերադարձնի նախապես մասնակի վճարված 2 040 000 /երկու միլիոն քառասուն հազար/ ՀՀ դրամը, Վարդենիսի համայնքապետարանի 900152151032 հաշվեհամարին, քանի որ նախապես մասնակի վճարված գումարի դիմաց ոչ մի աշխատանք չի իրականացվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա

AnyScanner

մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ՝ Պայմանագրի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 2 120 000 (երկու միլիոն հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, և որակավորման ապահովման գումարը՝ 3 180 000 (երեք միլիոն հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2023թ. ապրիլի 12-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 2 120 000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 3 180 000 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ԱՍ-Նախագիծ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (հրավեր 8.14 կետի 2-րդ պարբերություն /սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին/):

Վարդենիս համայնքի ղեկավար՝ *Ա.Խաչատրյան*

Կատարող՝ Գնումների բաժին
Հեռ. 098288063